IPRA-ի՝ կլիմայի փոփոխության շուրջ հաղորդակցությունների ուղեցույց

Հիմնվելով Միացյալ ազգերի կազմակերպության կայուն զարգացման նպատակների ու հատկապես 13-րդ նպատակի վրա՝ «Ձեռնարկել հրատապ քայլեր կլիմայի փոփոխության ու դրա հետևանքների դեմ պայքարի համար»

Ընդունելով, որ հասարակայնության հետ կապերի մասնագետները հաղորդակցման իրենց հմտություններով տիրապետում են ազդեցության առանձնահատուկ միջոցների

Ընդունելով, որ հասարականության հետ կապերի մասնագետներն առանցքային դեր են կատարում կլիմայի փոփոխության դեմ պայքարի գործում, որովհետև նրանք կապող օղակ են կազմակերպությունների ու տարբեր շահագրգիռ կողմերի միջև

Կլիմայի փոփոխության շուրջ հաղորդակցություններ վարելիս հասարակայնության հետ կապերի մասնագետները պետք է՝

1. IPRA-ի վարքագծի կանոնագրքի երկրորդ հոդվածի համաձայն՝ լինեն ազնիվ ու բարեխիղճ
- կլիմայի հետ կապված հաղորդակցություններում ցուցաբերեն ազնվություն
- գիտական փաստերը լայն զանգվածներին ներկայացնեն հանրամատչելի լեզվով

2. IPRA-ի կանոնագրքի երրորդ հոդվածի համաձայն՝ ստեղծեն երկխոսության բարոյական պայմանները
- զարգացնելով ներքին մշակույթը, որտեղ գործընկերներն անկաշկանդ են կիսվելու իրենց մտահոգություններով
- համագործակցելով կլիմայի փոփոխության շուրջ դրական գործողությունների արտաքին ջատագովների հետ
- խթանելով կլիմայի վերաբերյալ կրթությունը մասնագիտական և հասարակական մակարդակներում

3. IPRA-ի կանոնագրքի չորրորդ հոդվածի համաձայն՝ լինեն բաց և թափանցիկ
- հաշվետվություններ ներկայացնելով սեփական կազմակերպության արտանետումների և դրանց կրճատումների ուղու վերաբերալ

4. IPRA-ի կանոնագրքի հինգերորդ հոդվածի համաձայն՝ խուսափեն մասնագիտական կոնֆլիկտներից
- իրականացված աշխատանքի մանրակրկիտ ուսումնասիրման միջոցով
- համոզվելով, որ կատարվող աշխատանքը համահունչ է ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներին

- հաճախորդներին և ղեկավարությանը հասարակության ակնկալիքների վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելով

5. IPRA-ի կանոնագրքի յոթերորդ հոդվածի համաձայն՝ ապահովեն ճշմարտությունն ու ճշգրտությունը

- խրախուսելով օգտվել գիտահենք աղբյուրներից՝ Կլիմայի փոփոխության միջկառավարական խմբին համապատասխան
- խրախուսելով հաճախորդներին առերեսվել աղբյուրներին, որոնք հակառակ են իրենց դիրքորոշմանը
- բարձրաձայնելով հանրային դաշտում ոչ ճշգրիտ հաղորդակցության դեպքերի մասին

6. IPRA-ի կանոնագրքի ութերորդ հոդվածի համաձայն՝ չտարածեն ապակողմնորոշիչ տեղեկատվություն

- կանխելով greenwashing-ը՝ հղում կատարելով գիտահենք տվյալներին

7. IPRA օրենսգրքի տասներորդ հոդվածի համաձայն՝ չօգտագործել չբացահայտված շահեր սպասարկող կազմակերպությունները

- չհամագործակցելով կառույցների հետ, որոնք ֆինանսավորվում են արտանետումների զգալի ներդրում ունեցող կազմակերպությունների կողմից կամ ժխտում են կլիմայի փոփոխությունը:

Ընդունվել է 2023 թվականի հունվարին